«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ» փակ բաժնետիրական ընկերություն 20 շենք, Գ. Հովսեփյան փող., Նորք, Երևան, 0047, Հայաստան
Հեռ. +374-10-510051

«Սոֆթ Կոնստրակտ» ՓԲԸ ընկերության
Համապատասխանության ապահովման բաժնի ղեկավար
Սարգիս Նազարյանից «Հետք»-ի լրագրող Սամսոն Մարտիրոսյանին

Շնորհակալություն Ձեր նամակի համար:

Ուրախ եմ պատասխանել Ձեր հարցերին: Դա անելուց առաջ ես կցանկանայի Ձեզ հետ կիսվել որոշ մանրամասներով, քանի որ դրանք կօգնեն Ձեզ ավելի լավ ըմբռնել իմ պատասխանները:

SoftConstruct-ը մատակարարում է ծառայություններ և տեխնոլոգիաներ հարյուրավոր ընկերությունների ամբողջ աշխարհում: Թեև SoftConstruct-ը ստեղծվել է Հայաստանում, այն միջազգային ընկերություն է, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Մեծ Բրիտանիայում և ունի մասնաճյուղեր ավելի քան 15 երկրներում: SoftConstruct Armenia-ն այս մասնաճյուղերից միայն մեկն է: Այն ծառայություններ է մատուցում SoftConstruct-ին: SoftConstruct-ը վաճառում է այս ծառայություններն աշխարհի տարբեր երկրներում լիցենզավորված իր գործընկերներին:

SoftConstruct-ի գործընկերներից ոչ մեկը լիցենզավորված չէ Թուրքիայում: Այլ երկրներում լիցենզավորված ընկերություններից որոշները սպասարկում են ամբողջ աշխարհով սփռված թրքախոս բնակչությանը: Այս գործընկերներին և նրանց հաճախորդներին սպասարկելու համար SoftConstruct Armenia-ում աշխատում են թրքախոս մասնագետներ, այդ թվում՝ Թուրքիայի քաղաքացիներ, ովքեր իրավունք ունեն բնակվելու և աշխատելու Հայաստանում:

Հիմա պատասխանեմ Ձեր հարցերին.

1. Այո, մենք գիտենք Տոլգա Ալպասլանին: Ոչ, մենք Տոլգա Ալպասլանի հետ գործընկերային հարաբերություններ չունենք: Նա ունի Հայաստանում ապրելու և

«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ» փակ բաժնետիրական ընկերություն 20 շենք, Գ. Հովսեփյան փող., Նորք, Երևան, 0047, Հայաստան
Հեռ. +374-10-510051

աշխատելու իրավունք և օրինականորեն աշխատում է SoftConstruct Armenia ընկերությունում՝ որպես խաղավար-մենեջեր:

2. Ինչպես վերը նշեցի, մենք մեր լիցենզավորված ծրագրերը տրամադրում ենք բազմաթիվ ընկերությունների, այդ թվում՝ օպերատորների և մատակարարների: Մատակարարներն իրենց հերթին իրավունք ունեն մեր ծրագրերը մատակարարել օպերատորներին, որոնց մենք չգիտենք և պարտադրված չենք իմանալ: Հնարավոր է, որ BetMoon-ը այս օպերատորներից մեկն է: Մենք մեր ծրագրերը ուղղակիորեն չենք մատակարարում BetMoon-ին:

3. Խաղային ծրագրեր ստեղծող ընկերություններն իրենց ծրագրերը մատակարարում են միանգամից բազմաթիվ օպերատորների: Մենք նույնպես մեր լիցենզավորված ծրագրերը տրամադրում ենք բազմաթիվ ընկերությունների: Թե՛ Vivarobet-ը, և թե՛ BetMoon-ը, բացի VisionCasino-ից, նաև օգտագործում են iSoftBet ի, Microgaming-ի, Evolution-ի, Playtech-ի, և շատ այլ հանրաճանաչ ընկերությունների ծրագրեր: Դա նորմալ պրակտիկա է այս ոլորտի համար: Այդ պատճառով շատ կայքերում կարող եք գտնել նույն ընկերությունների ծրագրերը:

4. Ո՛չ SoftConstruct-ը, ո՛չ էլ նրա մասնաճյուղերը՝ ներառյալ Հայաստանում գործող մասնաճյուղը, ներգրավված չեն որևէ երկրում՝ ներառյալ Թուրքիայում խաղադրույքներ կազմակերպելու գործընթացում: Դա մեր գործը չէ: Մեր գործն

է լիցենզավորված սուբյեկտներին տեխնոլոգիա մատակարարելը:

Եթե ունեք այլ հարցեր, ես ուրախ կլինեմ պատասխանել դրանց:

Հարգանքով՝

Սարգիս Նազարյան

28/06/2021